«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

3 Հուլիսի 2023, N 8 - 2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի դեկանի՝ 2021-2022 ուսումնական տարում և 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ֆակուլտետում իրականացված ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2018-2022 թթ. զարգացման ռազմավարությամբ նախատեսված գործողությունների կատարման մասին հաշվետվությունը (զեկուցող՝ ֆինանսական ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Վ.Կ.Միքայելյան)՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Ֆինանսական ֆակուլտետի ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն և կատարվածը գնահատել բավարար:

2. **Ֆակուլտետի դեկանատին՝**
   1) ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերում պարբերաբար անդրադառնալ դասաձախողումներին, դրանց կանխարգելման նկատմամբ լինել հետևողական.
   2) թղթային և էլեկտրոնային մատյաններում ուսանողների հաճախումների և ակտիվության գրանցման նկատմամբ հսկողությունն ու մշտադիտարկումները դարձնել ամսական.
   3) պատշաճ ուշադրություն դարձնել Moodle հարթակում առարկայական մոդուլների կահավորմանը.

4) օժանդակել շարժունության ծրագրերի ակտիվացմանը, ֆակուլտետի միջազգային կապերի ընդլայնմանը.
5) ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերում համալսարանի գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումների քննարկման ժամանակ վերհանել առկա խնդիրները՝ հետևելով նոր ռազմավարության կատարողականներին. խստապահանջ լինել էթիկայի կանոնների և աշխատանքային կարգապահության պահպանման հարցերում.
6) նպաստել նոր լսարանների կահավորմանը համապատասխան տեխնիկական միջոցներով.
7) կատարելագործել դեկանատի աշխատանքների կատարման որակը, նպաստել աշխատանքների արդյունավետության բարձրացմանը.
8) պարբերական դարձնել ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերին գործատուների մասնակցությունը՝ ակտիվորեն պահպանելով հետադարձ կապը նրանց հետ.
9) խստագույնս հետևել յուրաքանչյուր հանձնարարականի կատարման վերջնաժամկետներին, անհրաժեշտության դեպքում դրանք քննարկել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հետ:

3. Ֆակուլտետի կազմի մեջ մտնող ամբիոնի վարիչներին՝

1) համալսարանի ռազմավարական նպատակներից ելնելով հետևողական լինել ֆակուլտետի ամբիոնների ակադեմիական կազմի վերապատրաստման գործընթացին.
2) դեկանատի հետ համատեղ ընդլայնել արտաքին շահառուների հետ փոխգործակցության շրջանակը.
3) աշխատել մագիստրոսական կրթական ծրագրերի զարգացման ուղղությամբ, նորացնել և արդիականացնել առկա կրթական ծրագրերը, նախաձեռնել նոր կրթական ծրագրեր.
4) ակտիվացնել գիտահետազոտական աշխատանքների և ուսումնամեթոդական նոր նյութերի մշակումները.
5) աջակցել դրամաշնորհային ծրագրերով գիտահետազոտական աշխատանքներին մասնակցությանը.
6) փորձառությունների ծրագրերը դարձնել առավել համահունչ աշխատաշուկայի պահանջներին.
7) խրախուսել լավագույն ուսանողների ներգրավվածությունը միջազգային հետազոտություններում ու փոխանակման ծրագրերում.

8) կուրսղեկների և այլ դասախոսների ներգրավմամբ աշխատանքներ կատարել ուսանողական գիտական ընկերության գործունեության մեջ ուսանողների մասնակցության մակարդակի բարձրացման ուղղությամբ.
9) նպաստել ուսանողների և դասախոսների համատեղ հետազոտությունների իրականացմանը և տարբեր դրամաշնորհային ծրագրերում ներգրավմանը.
10) խրախուսել շնորհալի ուսանողների ստեղծագործական գործունեության հանրայնացումը:

4. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2023 թ. հուլիսի 3
Երևան